

Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ,  
հարգելի գործընկերներ,  
հարգելի հյուրեր.

Վճռաբեկ դատարանի անունից Շնորհակալություն եմ հայտնում մեր հրավերքն ընդունելու և այս ընդունելությանը մասնակցելու համար:

Այսօր լրանում է վճռաբեկ դատարանի տասնամյակը: Սա բավական ժամանակահատված է ափովելու համար իրականացված գործունեությունը, արձանագրելու ձեռքբերումները և լրջորեն խորհելու ապագայի անելիքների մասին:

Անցած ճանապարհը չի եղել հարթ: Ստեղծվելով տակավին տաս տարի առաջ, Վճռաբեկ դատարանը ժառանգություն էր ստացել մի համակարգ, որն իր մեջ կրում էր խորհրդային արդարադատության ողջ բացասականը. արդարադատական համակարգը չէր դադարել լինել գործադիր իշխանության կցորդը, օրենսդրությունը չէր պարունակում արագ և անկողմնակալ արդարադատություն ապահովող հայեցակարգային լուծումներ, դատական համակարգի կազմակերպական ապահովումը գտնվում էր ծայրահեղ վատ վիճակում: Այս ամենը համեմվում էր դատարանների նկատմամբ հասարակական վստահության ցածր մակարդակով:

1998 թվականին սկիզբ առած դատաիրավական բարեփոխումները սահմանեցին ներկայիս դատական համակարգի հիմնական կառուցակարգային սկզբունքները:

Սակայն առաջին մի քանի տարիներն արդեն իսկ ցույց տվեցին, որ բարեփոխումները լինելու են շարունակական, իսկ դրանց արդյունավետության հիմնական չափանիշը լինելու է հասարակական վստահության մակարդակը:

2005 թվականի Սահմանադրաիրավական բարեփոխումների արդյունքում Վճռաբեկ դատարանը ստանձնեց երկրում օրենքների միատեսակ կիրառումն ապահովելու առաքելություն, ինչը հստակեցրեց Վճռաբեկ դատարանի դերակատարությունը իշխանության մարմինների համակարգում: Այլևս վճռաբեկ դատարանը դադարում էր լինել թեև բարձրագույն, սակայն ընդամենը հերթական դատական աստյան, այն

այլևս դառնում էր դատական իրավաստեղծության կարևորագույն աղբյուրը և օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի երաշխավորը:

Ստանձնելով նման բարձր սահմանադրական կարգավիճակ՝ երկրի բարձրագույն դատական ատյանը կարճ ժամանակահատվածում կայացրեց այնպիսի հիմնարար որոշումներ, որոնք էական ազդեցություն ունեցան դատական պրակտիկայի միասնականացման, իրավունքի զարգացման և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ապահովելու համար:

Այսօր ես ցանկանում եմ իմ երախտիքի խոքն ասել այն մարկանց, ովքեր իրենց անփոխարինելի ավանդն ունեն դատական համակարգի, և մասնավորապես, վճռաբեկ դատարանի բարեփոխման և ամրապնդման գործում:

Շնորհակալություն են հայտնում Հանրապետության Նախագահին, որը թեև ընդամենը շատ կարճ ժամանակահատված է դեռ առընչվում արդարադատության հիմնախնդիրներին, որի համար սակայն լիովին ըմբռնելի են մեր խնդիրները, իսկ Նախագահի վերջերս արած հայտարարությունը դատարանների անկախությունն ամրապնդելուն ուղղված համալիր ծրագիր իրականացնելու մասով լուրջ հույսեր են ծնել համակարգում իրավիճակի փոփոխման առումով:

Շնորհակալության խոսքս եմ ուզում ուղղել Հայաստանի երկրորդ նախագահ պարոն Ռոբերտ Քոչարյանին, որը վերջին տասը տարիներին ոչ միայն եղել է դատաիրավական բարեփոխումների հայեցակարգի մշակման անմիջական մասնակիցը, այլև անձնական մասնակցություն է ունեցել համակարգի կազմակերպական խնդիրները լուծելու հարցում:

Վճռաբեկ դատարանը և ողջ համակարգը զարգացում են ապրել ոչ միայն վերջին մի քանի տարիներին: Այսօրվա դատական համակարգի կայացումը մեծապես կախված է եղել նաև անցած տարիներին և տասնամյակներին այս համակարգը ղեկավարած մեր հարգելի գործընկերների ջանքերից: Երախտիքի խոսքս եմ ուզում ուղղել տարբեր ժամանակահատվածներում Հայաստանի բարձրագույն դատական ատյանի աշխատանքները ղեկավարած մեր ավագ գործընկերներին,

մասնավորապես՝ պարոն Արտավազդ Գևորգյանին, պարոն Տարիել Բարսեղյանին, պարոն Հենրիկ Դանիելյանին: *Սիրելի գործընկերներ, առանց Ձեր նվիրական աշխատանքի, մենք չէինք կարողանա հպարտանալ այսօրվա հաջողություններով:*

Չեմ կարող չհիշատակել արդարադատության նախկին նախարար Դավիթ Հարությունյանի մեծ ավանդը արդարադատության համակարգի բարեփոխման գործում: Վերջին տարիներին նրա անմիջական ղեկավարությամբ մշակվեցին և կյանքի կոչվեցին համակարգի բարեփոխման հիմնական հայեցակարգային մոտեցումները:

Շնորհակալություն եմ հայտնում Վճռաբեկ դատարանի դատավորներին, որոնց ամենօրյա մասնագիտական գործունեության արդյունքում են կյանքի կոչվում մեր գործունեության հիմնական նպատակները:

Ցանկանում եմ արձանագրել նաև այն ողջ աշխատակազմի աշխատանքի կարևորությունը, առանց ինչի անհնարին կդառնար վճռաբեկ դատարանի արդյունավետ գործունեությունը:

Այնուամենայնիվ, չնայած վերջին տարիներին արձանագրված էական առաջընթացին թե օրենսդրական ճիշտ մեխանիզմների սահմանման, թե դատական ակտերի որակի բարձրացման, թե դատական համակարգի կազմակերպական ապահովման ուղղություններով, մենք չենք գտնում, որ Հայաստանում արդարադատության որակը բավարար է: Դա կարձանագրենք միայն այն ժամանակ, երբ կստեղծենք մատչելի և արդյունավետ արդարադատություն և դրա արձանագրողը կլինենք ոչ թե դատավորներս, այլ հասարակությունը: Սակայն այս ուղղությամբ կան մեծ անելիքներ: Վստահ եմ, որ համատեղ ուժերով մենք կարող ենք ոչ շատ հեռու ապագայում լուծել այս կարևոր խնդիրը: Առանց սրա անհնարին կլինի տնտեսական և քաղաքական բարեփոխումների հաջող ընթացքը:

Մեծարգո Նախագահ, սիրելի հյուրեր

Կրկին շնորհակալություն եմ հայտնում մեր հոբելյանը մեզ հետ նշելու պատրաստակամության համար և հույս հայտնում հետագա արդյունավետ համագործակցության: Այդ կերպ ավելի կարճ կլինի ճանապարհը դեպի մատչելի և արդյունավետ արդարադատություն:

## Շնորհակալություն